ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման շինարարական աշխատանքներ
NCB No: CR4/NCB/B-W/007-19

Մրցութային փաստաթղթերի Փոփոխություն#2

23 Հունվար 2020թ.

Հարգելի Հայտատու,

Սույնով ցանկանում ենք տեղեկացնել, որ 2019թ. Դեկտեմբերի 23-ին ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում և www.gnumner.am կայքում հրապարակված «ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման շինարարական աշխատանքներ» CR4/NCB/B-W/007-19, մրցութային փաստաթղթերում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. Մրցութային փաստաթղթերի III-րդ Բաժին «Գնահատման և որակավորման չափանիշներ-3.Որակավորում»՝ «4.2(ա) Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ» Համատեղ գործունեություն (գոյություն ունեցող կամ մտադրվող) աղյուսակի «Բոլոր կողմերը միասին» դաշտում նշված «Կիրառելի չէ» բառերը, այսուհետ կարդալ հետևյալ կերպ. «Պետք է բավարարի պահանջը» ներառյալ 25-րդ հղումը, նույն աղյուսակի «Յուրաքանչյուր անդամ» դաշտում նշված «Պետք է բավարարի պահանջը և **(i) մեկ պայմանագիր առնվազն՝ 1,943,000,000 ՀՀ դրամ արժեքով, կամ (ii) երկու պայմանագիր յուրաքանչյուրն առնվազն՝ 971,500,000 ՀՀ դրամ արժեքով, կամ (iii) երեք պայմանագիր յուրաքանչյուրն առնվազն՝ 648,000,000 ՀՀ դրամ արժեքով**» բառերը, այսուհետ կարդալ հետևյալ կերպ. «Կիրառելի չէ» (տես Աղյուսակ 1):

2. Երկարաձգել Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետը մինչև **2020թ-ի Փետրվարի 18-ը, ժամը 12:00-ը**՝ մրցութային փաստաթղթերի II-րդ Բաժին «Մրցութային տվյալների աղյուսակ» ՄՀՀ 22.1 կետը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

ՀՄՄ 22.1	Մրցույթի մասնակիցները **պետք է** ներկայացնեն իրենց առաջարկներն էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների **ARMEPS (www.armeps.am կայքի)** համակարգի միջոցով մինչև **2020թ-ի Փետրվարի 18-ը, ժամը 12:00-ը**:[18] Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:

ՀՄՄ 22.1	**<u>Մրցութային առաջարկը ընդունվում է միայն</u>** էլեկտրոնային եղանակով՝ **ARMEPS էլեկտրոնային գնումների (www.armeps.am կայքի)** համակարգի միջոցով **Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետն է՝** Ամսաթիվ՝ **2020թ-ի Փետրվարի 18-ին, ժամը 12:00-ին:**

[18]Հայտը ներկայացնելիս առաջնորդվել www.armeps.am կայքի (կայքի վերևի ձախ անկյունում) տեղադրված ժամացույցով և ուշադրություն դարձնել www.armeps.am կայքում սահմանված՝ «Ժամանակի սահմանափակում հայտերի ստացման կամ մասնակցության հայտերի համար» մասով սահմանված վերջնաժամկետին:

3. Երկարաձգել Մրցութային առաջարկների բացման վերջնաժամկետը մինչև **2020թ-ի Փետրվարի 18-ը, ժամը 12:00-ը՝** մրցութային փաստաթղթերի II-րդ Բաժին «Մրցութային տվյալների աղյուսակ» ՄՀՀ 25.1 կետը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

ՀՄՄ25.1	Առաջարկների բացումը տեղի կունենա **2020թ-ի Փետրվարի 18-ին, ժամը 12:00-ին** Համակարգի միջոցով:

4. Երկարաձգել հայտերի ներկայացման վերջնաժամկետը մինչև **2020թ-ի Փետրվարի 18-ը, ժամը 12:00-ը** ՝ «Հայտերի ներկայացման հրավեր» 5-րդ կետը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«5.Հայտերը պետք է ներկայացվեն <u>ARMEPS</u> էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ոչ ուշ, քան **2020թ. Փետրվարի 18-ը, ժամը 12:00-ն:** Ընդ որում, հայտը կազմող փաստաթղթերը պետք է լինեն կնքված, ստորագրված և բնօրինակից սկանավորված կամ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված: Ուշացած հայտերը ավտոմատ կերպով չեն ընդունվի էլեկտրոնային համակարգի կողմից»:

5. Փոփոխել Մրցույթի ապահովման հայտարարագրում նշված ժամկետը՝ մրցութային փաստաթղթերի IV-րդ Բաժին «Մրցութային առաջարկի ձևաթղթեր», «Մրցույթի ապահովման հայտարարագիր» 2-րդ պարբերությունը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«Մենք ընդունում ենք, որ մենք ավտոմատ կերպով **3 (երեք)** տարով կզրկվենք **Փոխառուի կողմից** հայտարարված որևէ մրցույթին մասնակցելու իրավունքից սկսված **2020թ-ի Փետրվարի 18-ից,** եթե մենք չկատարենք հայտի պայմաններով սահմանված մեր պարտականությունները, եթե.»:

Աղյուսակ 1

Իրավասության և որակավորման չափանիշներ			Համապատասխանության պահանջներ				Փաստաթուղթ
No.	**Անվանում**	**Պահանջ**	**Մեկ կազմակեր-պություն**	**Համատեղ գործունեություն (գոյություն ունեցող կամ մտադրվող)**			**Ներկայաց-ման պահանջներ**
				Բոլոր կողմերը միասին	**Յուրաքանչյուր անդամ**	**Մեկ անդամ**	
4.2 (ա)	**Հատուկ շինարարական և պայմանագրի կառավարման փորձ**	(i) Մինիմալ թվով ստորև սահմանված նմանատիպ պայմանագրեր[22] **հասարակական և բնակելի շինությունների կառուցման և/կամ վերակառուցման բնագավառում**, որոնք Մասնակիցը գոհացուցիչ և էապես[23] ավարտվել է որպես գլխավոր կապալառու, ՀԳ անդամ[24], կառավարող կապալառու կամ ենթակապալառու[23]՝ **2015 թ-ի հունվարի 1-ից** մինչև առաջարկների ներկայցման վերջնաժամկետն ընկած ժամանակաշրջանում. **(i) մեկ պայմանագիր առնվազն՝ 1,943,000,000 ՀՀ դրամ արժեքով, կամ** **(ii) երկու պայմանագիր յուրաքանչյուրն առնվազն՝ 971,500,000 ՀՀ դրամ արժեքով,** **կամ**	Պետք է բավարարի պահանջը	Պետք է բավարարի պահանջը[25]	ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ	ԿԻՐԱՌԵԼԻ ՉԷ	Ձևաթուղթ EXP 4.2(ա)

Իրավասության և որակավորման չափանիշներ			Համապատասխանության պահանջներ				Փաստաթուղթ
No.	Անվանում	Պահանջ	Մեկ կազմակեր-պություն	Համատեղ գործունեություն (գոյություն ունեցող կամ մտադրվող)			Ներկայաց-ման պահանջներ
				Բոլոր կողմերը միասին	Յուրաքանչյուր անդամ	Մեկ անդամ	
		(iii) երեք պայմանագիր յուրաքանչյուրն առնվազն՝ 648,000,000 ՀՀ դրամ արժեքով :					

[22]Նմանատիպ համարվում է ֆիզիկական ծավալով, բարդության, մեթոդների/տեխնոլոգիաների և/կամ VII բաժնում (Աշխատանքներին ներկայացվող պահանջները) նկարագրված այլ բնութագրերի հիման վրա: Փոքր արժեքով (պահանջով սահմանված արժեքից փոքր արժեքով) մի քանի պայմանագրերի գումարումը ընդհանուր պահանջը բավարարելու համար չի ընդունվում:

[23] Պայմանագիրն էապես ավարտված է, եթե իրականացվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների 80% տոկոսը կամ ավելին:

[24] Այն պայմանագրերում, որտեղ Մրցույթի մասնակիցը եղել է ՀԳ անդամ կամ ենթակապալու, սույն պահանջի կատարումը որոշվում է միայն ընդհանուր արժեքում Մրցույթի մասնակցի կողմից կատարված մասով:

[25] ՀԳ-ի դեպքում անդամների կողմից ավարտված պայմանագրերի արժեքը չպետք է գումարվի՝ առանձին պայմանագրի նվազագույն արժեքի պահանջի կատարումը որոշելու համար: Հակառակը՝ յուրաքանչյուր անդամի կողմից իրականացված յուրաքանչյուր պայմանագիր պետք է բավարարի առանձին պայմանագրի նվազագույն արժեքին, որը պահանջվում է առանձին կազմակերպությունից: Որպեսզի որոշվի, թե արդյոք ՀԳ-ն համապատասխանում է պայմանագրերի ընդհանուր թվի պայմանին, պետք է գումարվեն միայն բոլոր անդամների կողմից իրականացված պայմանագրերը, որոնցից յուրաքանչյուրը պետք է լինի պահանջվող նվազագույն արժեքին հավասար կամ դրանից ավել: